

գտնուած էր մզկիթի մը մէջ, որ առաջ եկեղեցի էր. կ'ըսուի թէ ան վեցանկիւննի ձևով եղնգնաքար մ'էր, ըստ Կիլիսիոմ Տիւրացիի նկարագրութեան. բաժակին տրամագիծն էր 13 մատ, բարձրութիւնը վեց ու կէս. սպասին պատեանը ոսկիով և պատուական քարերով զարդարուած էր. այնպէս կարծուած էր թէ ան զմրուխտ է, և յետոյ ըսուած է թէ ապակի է: Այս սկիւնին զրոյցը պատմական յիշատակարան չունի, բայց մեծ համբաւ հանած է միջին դարու գրականութեան մէջ (մանրամասնութիւնները տեսնել՝ Mislin, Les Saints Lieux, Բ. Հտր. էջ 109-110):

3. Կեսարիոյ հայ գաղութը եւ անոր եկեղեցին.

Ինչպէս վերեւի պատմական տողերէն յայտնի եղաւ, Պաղեստինեան Կեսարիա քաղաքը և իր նաւահանգիստը որքան ծաղկեալ և բարգաւաճ վիճակ մը ստացաւ բիւզանդական շրջանին և Պաչակրաց ժամանակ: Կեսարիոյ վաճառականները կը տարածուէին մինչև Ասիոյ խորերը և Հայաստանի մէջ, ինչպէս նաև Արևմուտքի կողմերը. Կեսարիոյ առևտրականները կ'արտածէին Կեսարիոյ թանկագին ծիրանին և կը փոխանակէին տեղական ապրանքներու հետ, զոր կը ներածէին Կեսարիա: Այս ծաղկեալ քաղաքը և իր Ս. Գրոց գրականութիւնը Ե. դարուն անձանօթ չէր կրնար ըլլալ Հայոց. վասն զի հոն էր որ, ինչպէս տեսանք վերև, Որոզինէս տաղանդաւոր վարդապետը լրացուց իր սուրբ-գրական աշխատանքը և երկասիրեց Քառիջեան և Վեցիջեան անուամբ գործերը՝ որոնք կարևոր ազբիւրններ դարձան Ս. Գրոց աղաւաղեալ օրինակները սրբագրելու գործին: Պատմութիւնը կ'ըսէ թէ Պամփիլիոս Բիւրիտոնացի վկան ու անոր մտերիմն ու աշակերտը Եւսեբիոս Կեսարացին գաղափարեցին Ս. Գրոց օրինակներ Եօթանասնից ընտիր և ստուգահաւատ թարգմանութեան և նոյն օրինակները բազմատեյ տուին Որոզինէսի Վեցիջեան և Քառիջեան երկասիրութեանց վրայ, որ կը պահուէին Կեսարիոյ մատենադարանին մէջ. և այդպիսի խնամով սրբագրուած օրինակները կը կոչուէին Պաղեստինական: Այս օրինակներն էին վաւերացեալ գիրքերը, որ կը կարգացուէին գաւառին եկեղեցիներուն մէջ, արտօնութեամբ Կեսարիոյ եպիսկոպոսին: Պամփիլ-